ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 05

«ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» ԿՈՂՄԻՑ **«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՌԿԱ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՈՒՄ, ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ և ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՆՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՈՒՄ»** ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

2023 թ. հունվարի 11-ին, ժամը՝ 14:00 –ին կայացած նիստի

ք. Երևան

Արթուր Մարտիրոսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Զարա Ասլանյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության պետ (հանձնաժողովի անդամ)
Անուշ Մխիթարյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Ռեգինա Առաքելյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Նարինե Հովհաննիսյան	-	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության ավագ մասնագետ (Հանձնաժողովի քարտուղար)

Օրակարգային հարցեր

1. Նիստի օրակարգի քննարկում:
2. Գնահատումների ամփոփում:

1. Օրակարգի 1-ին հարց

Ա. Մարտիրոսյանը հայտարարեց նիստը բացված և ներկայացրեց հանձնաժողովի նիստի օրակարգի հարցերը:

Օրակարգի 1-ին հարցի քննարկումից հետո քվեարկության արդյունքում որոշվեց. Հաստատել հանձնաժողովի նիստի օրակարգը:

2. Օրակարգի 2-րդ հարց

Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի անդամներին փոխանցեց ԵՔ-ԴՄ-ԲՊ - 03/22 ծածկագրով հայտարարված ***«Երիտասարդության շրջանում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում, առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում, առաջին օգնության ցուցաբերման հմտությունների վերաբերյալ գործնական և տեսական դասընթացների և վարժանքների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում»*** դրամաշնորհային մրցույթին դիմած 4 կազմակերպությունների մրցութային հայտերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը,այնուհետև, ևս մեկ անգամ ուսումնասիրելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ԵՔ-ԴՄ-ԲՊ-03/23 ծածկագրով դրամաշնորհային մրցույթին հայտ ներկայացրած բոլոր կազմակերպությունների դրամաշնորհային հայտի փաթեթները՝ Հանձնաժողովը արձանագրեց,որ«Կրթություն և գործունեություն» սոցիալ բարեգործական կրթամշակութային հիմնադրամի կողմից ներկայացված ծրագրում ներգրավվող աշխատանքային ռեսուրսների մասնագիտական փորձառությունը բավարար չէ ծրագրի նպատակները և խնդիրներն իրականացնելու համար,ծրագիրը չի բխում մասնակցի կանոնադրական նպատակներից, նմանատիպ ծրագրերի իրականացման փորձառությունը թերի է, «Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարանի կողմից ներկայացված ծրագիրն առնչվում է դրամաշնորհային ծրագրի միայն մեկ բաղադրիչին՝ առաջին օգնությանը, թերի է նմանատիպ ծրագրերի իրականացման փորձառությունը, ծրագրի պլանավորումն իրատեսական չէ և հնարավոր չի դարձնում դրված խնդիրների իրականացումը, «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամի կողմից ներկայացված հայտի փաթեթը համապատասխանում դրամաշնորհի հրավերով սահմանված որակավորման տվյալների չափանիշներին, ծրագրերով նախանշված ակնկալվող արդյունքները համապատասխանում են ծրագրի նպատակներին և խնդիրներին, կազմակերպությունն ունի նմանատիպ ծրագրի իրականացման հարուստ փորձառություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը ամփոփեց գնահատման արդյունքները համաձայն ստորև ներկայացված աղյուսակի

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Տեղեկություն բացված ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ	Տեղեկություն մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու վերաբերյալ	Մասնակիցների ներկայացրած ֆինանսական նախահաշվի ընդհանուր արժեքը /ՀՀ դրամ/	Տեղեկություն հայտերի հետկանչման կամ փոփոխությունների մասին, ինչպես նաև հայտերի վերաբերյալ հարցումների մասին	Հայտերի գնահատման արդյունքները (միջին գնահատական)
1	«Կրթություն և գործունեություն» սոցիալ բարեգործական կրթամշակութային հիմնադրամ	Հրավերի ՄԱՍ I 2-րդ կետի 2.3, 2.4, ինչպես նաև 4-րդ կետի 4.3-ենթակետերով պահանջվող փաստաթղթերի թերի ներկայացում	Մասնակցի կողմից ներկայացրած փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	2676360	Փոփոխություններ չեն իրականացվել	0.1
2	«Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ	Հրավերի ՄԱՍ I 4 4.3 ենթակետերով պահանջվող փաստաթղթերի թերի ներկայացում	Մասնակցի կողմից ներկայաց փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	2 694 000	Ֆինանսական նախահաշիվը և դիմում-հայտարարությունը ներկայացվել են էլեկտրոնային ստորագրությամբ Ֆինանսական նախահաշվում ավելացվել է ԱԱՀ տողը,ներկայացվել են գնառաջարկները	1

3.	Չարենցավանի երիտասարդական ուսանողական հասարակական կազմակերպություն	Հրավերով անհրաժեշտ փաստաթղթերի թերի ներկայացում, համակարգով կցված չէ ծրագրային առաջարկը	<u>Մասնակցի</u> կողմից ներկայաց փաստաթղթերի վավերապայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	1 319 000	Կազմակերպության կողմից կցված դիմում-հայտից և ֆինանսական նախահաշվից բացի armeps համակարգով այլ տեսանելի փաստաթղթեր առկա չեն եղել: Կազմակերպության կողմից ներկայացված հայտը դիտարկելու վերաբերյալ ՀՀ Ֆինանսների նախարարություն հարցում է ուղարկվել, վերոնշյալի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով: Արդյունքում՝ ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացվել է պարզաբանում (կից՝ գրությունը) առ այն, որ համակրգում առկա են միայն այն փաստաթղթերը, որոնք կցվել են կազմակերպության կողմից: Ինչը փատում է այն, որ	-

					Կազմակերպության կողմից կցված չէ ծրագրային առաջարկը, ուստի հանձնաժողովի որոշմամբ հայտը չի դիտարկվել:	
4.	«Մխիթար Գոշ» Հայ Ռուսական միջազգային համալսարան	Հրավերի ՄԱՍ I 2-րդ կետի 2.3, 2.4, ինչպես նաև 4-րդ կետի 4.3-ենթակետերով պահանջվող փաստաթղթերի թերի ներկայացում	<u>Մասնակցի</u> կողմից ներկայաց փաստաթղթերի վավերապայման ները համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին	2 698 600	Ֆինանսական նախահաշիվը և դիմում-հայտարարությունը ներկայացվել են էլեկտրոնային ստորագրությամբ	0.4

Օրակարգի 2-րդ հարցի քննարկումից հետո ձայների 4 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ Հանձնաժողովը որոշեց.

2.1. Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ԲՊ-03/23 ծածկագրով հայտարարած ***«Երիտասարդության շրջանում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում, առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում, առաջին օգնության ցուցաբերման հմտությունների վերաբերյալ գործնական և տեսական դասընթացների և վարժանքների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում»*** դրամաշնորհային մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն հավելված 1-ի,

2.2 Հաստատել այն կազմակերպությունների ցանկը, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ԲՊ-03/23 ծածկագրով հայտարարած ***«Երիտասարդության շրջանում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում, առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում, առաջին***

օգնության ցուցաբերման հմտությունների վերաբերյալ գործնական և տեսական դասընթացների և վարժանքների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում» դրամաշնորհային մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր՝ համաձայն հավելված 2-ի:

2.3. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում սույն նիստի արձանագրությունը, ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգի 28.1-ին կետով նախատեսված հայտարարությունները և սույն արձանագրության 2.1 կետում նշված կազմակերպությունների ներկայացրած հայտի պատճենները ներկայացնել նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչություն՝ նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու նպատակով,

2.4. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղարին 5 աշխատանքային օրվա ընթացքում սույն արձանագրության 2.1 և 2.2 կետերով հանձնաժողովի ընդունված որոշումները նախարարի հաստատմանը ներկայացնելու նպատակով մշակել և հանձնաժողովի նախագահին ներկայացնել համապատասխան հրամանի նախագիծ:

Արթուր Մարտիրոսյան _____

Զարա Ասլանյան _____

Անուշ Մխիթարյան _____

Ռեգինա Առաքելյան _____

Նարինե Հովհաննիսյան _____

Հավելված 1.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ 05 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

կազմակերպությունների, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ԲՊ-03/23 ծածկագրով հայտարարած ***«Երիտասարդության շրջանում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում, առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում, առաջին օգնության ցուցաբերման հմտությունների վերաբերյալ գործնական և տեսական դասընթացների և վարժանքների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում»*** մրցույթի արդյունքում կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր.

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Միջոցառման /ծրագրի/ անվանումը	Կազմակերպության կողից ակնկալվող գումարը /դրամ/	Նախարարության կողմից տրամադրվող առավելագույն գումարը /դրամ, ներառյալ ԱԱՀ/
1.	«Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ	«Դիմակայուն երիտասարդություն՝ դիմակայուն համայնք»	2 694 000*	2 700 000

***Կազմակերպության կողմից ներկայացված գումարը ներառում է ԱԱՀ**

Արթուր Մարտիրոսյան _____

Զարա Ասլանյան _____

Անուշ Մխիթարյան _____

Ռեգինա Առաքելյան _____

Նարինե Հովհաննիսյան _____

Հավելված 2.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԱՄՓՈՓԻՉ ՆԻՍՏԻ 05 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՑԱՆԿ

կազմակերպությունների, որոնց հետ ԵՔ-ԴՄ-ԲՊ-03/23 ծածկագրով հայտարարած ***«Երիտասարդության շրջանում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում, առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում, առաջին օգնության ցուցաբերման հմտությունների վերաբերյալ գործնական և տեսական դասընթացների և վարժանքների կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում»*** մրցույթի արդյունքում չի կարող կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Միջոցառման /ծրագրի/ անվանումը	Կազմակերպության կողից ակնկալվող գումարը /դրամ/
1	«Կրթություն և գործունեություն» սոցիալ բարեգործական կրթամշակութային հիմնադրա	«Պատրաստված համայնքներ»	2 676 360
2.	«Մխիթար Գոշ» Հայ Ռուսական միջազգային համալսարան	«Երիտասարդության շրջանում բնակչության պաշտպանության և աղետների ռիսկի կառավարման կարողությունների զարգացում, առկա հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում, առաջին օգնության ցուցաբերման հմտությունների վերաբերյալ գործնական և տեսական դասընթացների և վարժանքների	2 698 600

		կազմակերպում և համանման նախաձեռնությունների խրախուսում»	

Արթուր Մարտիրոսյան _____

Զարա Ասլանյան _____

Անուշ Մխիթարյան _____

Ռեգինա Առաքելյան _____

Նարինե Հովհաննիսյան _____